# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

2024թ. հունվարի --10-- N --6---- Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետրով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 25.10.2023թ. N ԳՍ/15.2/28443-2022 հանձնարարականը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2022 թվականի հուլիսի 8-ի թիվ 2948-Լ հրամանով հաստատված «Հոգեկան առողջության պահպանման և բարելավման միջոցառումների ցանկի» 4-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների կատարման մասով, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2024-2026 թվականների ընթացքում հոգեկան առողջության վերաբերյալ հանրության իրազեկության մակարդակի բարձրացման և նոր դիսկուրսի ձևավորման նպատակով ստեղծել հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին՝

1) ըստ տարածաշրջանների կազմակերպել աշխատանքային խմբի ներկայացուցիչների այցելություն-հանդիպումներ նվազագույնը տարեկան երեք անգամ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամներին՝ փոխօգնության, ինքնաջատագովության, հմտությունների ձևավորման և զարգացման ուղղությամբ գործառույթներ իրականացնելու նպատակով:

2) յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

1/9/2024

X

VERIFIED OCSP 1/9/2024 18:38:44 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզպետի
2024թ. 10.01 N 6-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

**աշխատանքային խմբի ղեկավար**

| | |
|---|---|
| Ռազմիկ Թադևոսյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի խորհրդական |

**աշխատանքային խմբի անդամներ**

| | |
|---|---|
| Կարեն Թաթուլյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ |
| Մերի Շահազիզյան | – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ |
| Սուսաննա Սարգսյան | – Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար |
| Արգիշտի Հովհաննիսյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Աշտարակի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության տնօրեն |
| Կարինե Մինասյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Աշտարակի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն |
| Արմինե Սարգսյան | -Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Աշտարակի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության հոգեբույժ |
| Հայկ Շմավոնյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության տնօրեն |
| Սևակ Սաֆարյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն |
| Լեյլի Հակոբյան | -Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի “Ապարանի բժշկական կենտրոն” փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության հոգեբույժ |

| | |
|---|---|
| Ազատ Ղուկասյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն տնօրեն |
| Մարիամ Նազարյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն |
| Կարինե Գրիգորյան | -Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի "Թալինի բժշկական կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության հոգեբույժ |
| Արմեն Հակոբյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության տնօրեն |
| Ջիվան Սանոսյան | - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի "Ծաղկահովիտի առողջության կենտրոն" փակ բաժնետիրական ընկերության պոլիկլինիկական ծառայության գծով փոխտնօրեն |

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Восстановимая подпись

X

ՀՐԱՉՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN HRACHYA 2014650144 Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ